մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն ենթակա էր հրապարակման՝ 04.10.2024թ. հայտարարությունից հետո 10-օրյա ժամկետում, որպեսզի պահանջը չի պահպանվել և Պայմանագիրը միակողմանի լուծելու 04.10.2024թ. հայտարարությունից հետո 10-օրյա ժամկետում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում չի հրապարակել, Դատարանն արձանագրում է, որ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է 04.10.2024 թվականին, իսկ հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը կայացվել է 14.10.2024 թվականին, այսինքն՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Ինչ վերաբերում է ցուցակում ընդգրկելու վերաբերյալ որոշման հրապարակմանը, ապա «Գնումների մասին»» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով կարգավորվում է գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման կայացման ժամկետները, այլ ոչ թե հրապարկման:

Վերոնշյալ պատճառաբանություններով Դատարանը գտնում է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Պաշտպանության նախարարություն պատվիրատուի ղեկավարի 14.10.2024թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը ենթակա է մերժման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի հիմքով անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին և հաշվի առնելով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, այլ դատական ծախսեր չկան սույն գործով, իսկ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-րդ, 362-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով ՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Յունիմայն» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Յունիմայն» ՍՊ ընկերության միջև 15.04.2024 թվականին կնքված Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության 04.10.2024 թվականի հայտարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պայմանագրի միակողմանի լուծումը և «Յունիմայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Պաշտպանության նախարարություն պատվիրատուի ղեկավարի 14.10.2024թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Կիմա Արզումանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am